ՌՈԲԵՐՏ ՆԱԶԱՐՅԱՆ

Ծնվել է 1956թ., Երևանում:

1973թ. ոսկե մեդալով ավարտել է Երևանի թիվ 46 միջնակարգ դպրոցը: 1973-1978թթ. սովորել է Երևանի Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտում, որակավորումը՝ ինժեներ-շինարար: Աշխատել է Երևանի տնաշինական կոմբինատում՝ վարպետից հասնելով մինչև կոմբինատի տնօրենի պաշտոնի:

1986-1987թթ. աշխատել է Երևանի խոշոր պանելային գործարանի տնօրեն, Մաշտոցի կուսշրջկոմի բաժնի վարիչ (1987-1988թթ.), Երևանի տնաշինական կոմբինատի տնօրեն (1988-1990թթ.):

1990 թվականից աշխատանքի է անցել Երևանի քաղաքային խորհրդի գործկոմում՝ որպես վարչության պետ, գլխավոր վարչության պետ, նախագահի տեղակալ:

1997-2000թթ. Ռ. Նազարյանը նշանակվել է ՀՀ էներգետիկայի նախարարի տեղակալ, 2000թ. փետրվարի 28-ից մինչև 2000թ. մայիսի 20-ն աշխատել է ՀՀ տրանսպորտի և կապի նախարար, մայիսի 24-ից՝ ՀՀ էներգետիկայի նախարարի առաջին տեղակալ:

2001թ. հունվարի 11-ից մինչև 2003թ. հուլիսը եղել է Երևանի քաղաքապետ: